ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «31» 03 2023թ № 585-Լ

ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշման N 3 հավելվածի 12-րդ կետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հաստատել հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ենթակայության փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման ընթացակարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող Նախարարության ենթակայության փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

Հավելված N 1
Էկոնոմիկայի նախարարի
2023 թվականի մարտի 31-ի
N 585-Լ հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Նախարարության ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) համար մրցույթ (այսուհետ՝ մրցույթ) անցկացնելու ընթացակարգը:

2. Մրցույթը անցկացնում է Նախարարության կողմից ձևավորված Հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշումով (այսուհետ՝ Որոշում), սույն ընթացակարգով և այլ իրավական ակտերով:

4. Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է Նախարարության անձնակազմի կառավարման ստորաբաժանումը (այսուհետ՝ քարտուղարություն), առաջնորդվելով Որոշումով, սույն ընթացակարգով և այլ իրավական ակտերով:

5. Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարց ու պատասխանի (այսուհետ՝ հարցազրույց) միջոցով, որը տեսաձայնագրվում է: Հարցազրույցը անցկացվում է հարցարանի միջոցով:

6. Հարցարանը կազմվում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» և տվյալ բնագավառի ՀՀ օրենքների և գործադիր մարմինների իրավասությունը սահմանող այլ իրավական ակտերի շրջանակում:

7. Գործադիր մարմնի թափուր պաշտոնի հավակնորդները (այսուհետ՝ հավակնորդ) մրցույթին մասնակցելու համար քարտուղարություն են ներկայացնում Որոշմամբ պահանջվող փաստաթղթերը:

8. Քարտուղարությունը մինչև մրցույթի սկիզբը ստուգում է փաստաթղթերի համապատասխանությունը Որոշման N 3 հավելվածով սահմանված կարգի 6-րդ կետի պահանջներին:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Հանձնաժողովը՝

1) քարտուղարությունից ստանում է մրցույթին մասնակցելու համար դիմած հավակնորդների փաստաթղթերը, մրցութային հանձնաժողովի կլոր կնիքը և մրցույթին վերաբերող նյութերը.

2) ուսումնասիրում է հավակնորդի կողմից ներկայացված փաստաթղթերը և կայացնում որոշում՝ վերջինիս մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու կամ չթույլատրելու մասին.

3) հավակնորդին չի թույլատրում մասնակցել մրցույթին, եթե ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում տվյալ պաշտոնի համար սահմանված պահանջներին կամ թերի են.

4) մասնակիցների հետ անցկացնում է հարցազրույց՝ ստուգում և գնահատում է տնօրենի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացությունը.

5) յուրաքանչյուր մասնակցի հարց ու պատասխանի ավարտից անմիջապես հետո անցկացնում է փակ գաղտնի քվեարկություն.

6) իրականացնում է քննարկումներ առանձին հարցերի շուրջ.

7) ուսումնասիրում է մասնակցի կողմից մրցույթի արդյունքների վերաբերյալ ներկայացված բողոքները և կայացնում դրանց վերաբերյալ որոշում.

8) յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ կայացնում է որոշումներ և տալիս դրական կամ բացասական եզրակացություն, որոնք կնքվում են Հանձնաժողովի կնիքով.

9) ամփոփում և հրապարակում է մրցույթի արդյունքները.

10) որոշման հիման վրա հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) վերաբերյալ տալիս է եզրակացություն վերջինիս հետ պայմանագիր կնքելու իրավասություն ունեցող անձին.

11) քարտուղարությանը հանձնում է Հանձնաժողովի որոշումները, արձանագրությունը, եզրակացությունը, ինչպես նաև մրցույթին մասնակցելու համար դիմած հավակնորդների փաստաթղթերը (այսուհետ՝ մրցութային փաթեթ) ՀՀ օրենսդրությանը համապատասխան պահպանելու և արխիվացնելու համար.

10. Հանձնաժողովը պետք է ապահովի հավակնորդների համար կազմակերպությունների գործադիր մարմնի թափուր պաշտոն զբաղեցնելու հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ինչպես նաև անցկացվող մրցույթի թափանցիկությունն ու հրապարակայնությունը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Մրցույթն անցկացվում է հայտարարության մեջ նշված վայրում և ժամկետներում:

12. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

13. Հանձնաժողովի նիստերը իրավազոր են, եթե նիստին մասնակցել են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

14. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներով:

15. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝ երկու ժամվա ընթացքում:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

16. Հանձնաժողովի նախագահը՝

1) վարում է հանձնաժողովի նիստերը.

2) իրականացնում է մրցույթի աշխատանքների հսկողությունը.

3) հարց ու պատասխանի ժամանակ կարող է ընդհատել անհարկի ծավալված բանավեճը.

4) մասնակիցներին տալիս է հարցեր և մասնակցում անցկացվող քվեարկությանը՝ քվեարկելով կողմ կամ դեմ.

5) որոշում է մրցույթի հետ կապված հարցերի, դիմումների և բողոքների քննարկման հերթականությունը՝ այն համաձայնեցնելով Հանձնաժողովի անդամների հետ.

6) ստորագրում է մրցույթի արձանագրությունը, որոշումները և եզրակացությունը, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում ստորագրության կողքին գրառում է «հատուկ կարծիքը կցվում է» բառերը.

7) իրականացնում է սույն ընթացակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ գործողություններ:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

17. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) անձը հաստատող փաստաթղթի հիման վրա ստուգում է մասնակցի ինքնությունը.

2) բացատրում և պատասխանում է մասնակիցներին մրցույթի անցկացման հետ կապված տեխնիկական հարցերին.

3) ապահովում է Հանձնաժողովի նիստերի արձանագրումը.

4) իրականացնում է սույն ընթացակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ գործողություններ:

6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

18. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է մրցույթի աշխատանքներին.

2) հարց ու պատասխանի անցկացման ժամանակ բարձրաձայն հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ լինելու մասին, իսկ սխալ պատասխանի դեպքում՝ տալիս է ճիշտ պատասխանը.

3) մասնակցում է հարց ու պատասխանի արդյունքում Հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր մասնակցի համար անցկացվող քվեարկությանը՝ քվեարկելով կողմ կամ դեմ.

4) ծանոթանում է նիստի արձանագրություններին.

5) ստորագրում է մրցույթի արձանագրությունը, որոշումները և եզրակացությունը, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում ստորագրության կողքին գրառում է «հատուկ կարծիքը կցվում է» բառերը.

6) իրականացնում է սույն ընթացակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ գործողություններ:

7. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

19. Հանձնաժողովը մրցութային փաթեթը քարտուղարությանը հանձնելուց հետո դադարեցնում է իր գործունեությունը:

20. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված N 2
Էկոնոմիկայի նախարարի
2023 թվականի մարտի 31-ի
N 585-Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

1. Սույնով սահմանվում է Նախարարության ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) համար մրցույթ անցկացնող հանձնաժողովների (այսուհետ՝ Հանձնաժողովներ) ձևավորման կարգը:

2. Հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակներն կազմվում են Նախարարության և համապատասխան ոլորտի մասնագետներից, այդ թվում՝ գիտական և ուսումնական հաստատություններից:

3. Հանձնաժողովների թեկնածուների ցուցակը կազմելու համար քարտուղարությունը հարցում է անում համապատասխան գիտական և ուսումնական հաստատություններին իրենց կողմից առաջադրվող թեկնածուների անունները ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Համապատասխան գիտական և ուսումնական հաստատություններից ներկայացված թեկնածուների անունները ստանալուց հետո կազմվում է Հանձնաժողովի անդամության թեկնածուների ցուցակ:

4. Մրցույթն անցկացնելու ժամկետից երկու օր առաջ Էկոնոմիկայի նախարարի (այսուհետ՝ Նախարար) կողմից Հանձնաժողովի անդամության թեկնածուների ցուցակից կատարված ընտրության արդյունքում քարտուղարությունը նախապատրաստում է տվյալ Հանձնաժողովի կազմը հաստատելու մասին Նախարարի հրամանի նախագիծ և ներկայացնում հաստատման: Նույն հրամանով Նախարարը Հանձնաժողովի անդամներից նշանակում է Հանձնաժողովի նախագահ:

5. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում է 7 թեկնածու՝ հետևյալ հարաբերակցությամբ.

1) հինգ թեկնածու՝ նախարարության ներկայացուցիչներ.

2) երկու թեկնածու՝ համապատասխան ոլորտի մասնագետներից, այդ թվում՝ գիտական և ուսումնական հաստատություններից:

6. Հանձնաժողովի կազմում ընդգրկված թեկնածուները քարտուղարության կողմից տեղեկացվում են մրցույթի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին ոչ շուտ, քան 24 ժամ առաջ:

7. Եթե մրցույթի ընթացքում Հանձնաժողովի որևէ անդամի մասնակցությունը Հանձնաժողովի հետագա աշխատանքներին դառնում է անհնար, ապա հանձնաժողովի կազմը չի համալրվում:

8. Եթե մրցույթի ընթացքում Հանձնաժողովի նախագահի մասնակցությունը հանձնաժողովի հետագա աշխատանքներին դառնում է անհնար, ապա Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ իր պարտականությունը կատարում է Հանձնաժողովի անդամներից որևէ մեկը:

9. Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնում է Նախարարի հրամանով Հանձնաժողովի կազմը հաստատելու պահից և դադարեցնում գործունեությունը՝ սույն հրամանի N 1 հավելվածի 19-րդ կետով սահմանված կարգով: